ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (ՊՐԵԶԵՆՏԱՑԻԱ)

1 Պլանավորում

Հանրության առաջ ելույթ ունենալը պահանջում է բարձր պատրաստվածություն: Իսկ ելույթն ավելի պատկերավոր և ընկալելի դարձնելու համար լավ է, որ հադիսատեսը ոչ միայն լսի, այլ նաև տեսնի: Խոսքը լսում են, անցնում-գնում է: Իսկ ներկայացումը (presentation) մնում է համակարգչում, որը կարող են պարբերաբար նայել և վերլուծել: Ուստի շատ կարևոր է, որ ներկայացումը պատրաստված լինի հետաքրքիր և բովանդակալից: Ահա մի քանի պարզ կանոններ, որոնք կօգնեն քեզ լավ ներկայացում պատրաստել:

Մի ներկայացում՝ մի թեմա

Դժվար է լսել մեկին, ով մի թեմայից մյուսն է ցատկում: Ուստի քո ներկայացումը պետք է արծարծի միայն մի թեմա: Այն պետք է լինի կոնկրետ և հնարավոր լինի ներկայացնել առավելագույնը 10 համառոտ կետերով:

Օրինակ՝

Ծավալուն, վերացական թեմաներ
1. Մեր դպրոցի կայնքը
2. Գրքերը օգնում են զարգանալ
3. Ծառերը ուշադրություն են պահանջում

Կոնկրետ, հասկանալի և գրավիչ թեմաներ
1. Գարնանային ծառատունկ դպրոցի բակում
2. Գրքի փառատոն՝ գրադարանում
3. Խնձորենու խնամքը՝ լավ բերքի համար

Որպեսզի ներկայացումը լինի շահագրգռող և հետաքրքրություն առաջացնի հանդիսատեսի մոտ, պետք է ունենա հստակ նպատակ:

Օրինակ

Վերացական նպատակ	Կոնկրետ նպատակ
1. Ցույց տալ, որ դպրոցի առօրյան ուրախ է անցնում	1. Համոզել բոլորին, որ գան ծառատունկին
2. Պետք է գիրք կարդալ	2. Ցույց տալ, որ գրքի փառատոնին ներկա լինելով կշահեն մրցանակներ
3. Ծառերը պետք է խնամել	3. Սովորեցնել, թե ինչպես է պետք խնամել խնձորենին

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առաջադրանք 1 «Իմ ներկայացման թեման»

Մտածիր, թե ինչի մասին կուզես պատմել քո դասարանցիներին:

1. Որոշիր թեման:

Օրինակ՝

- Գրքերի նկարազարդումը Հայաստանում
- Կարգապահության կանոնները մեր դպրոցում
- Ինչպես օգտվել էլեկտրոնային գրքերից
- Դարձիր աշակերտական կազմակերպության անդամ

2. Սահմանիր քո ներկայացման նպատակը: Դրա համար բավական է պատասխանել հետևյալ հարցին. «Ինչի՞ եմ ուզում հասնել այս ներկայացման միջոցով»:

Օրինակ՝

- Ծանոթացնել բոլորին, թե ինչ մեծ նշանակություն է ունեցել գրքերի նկարազարդումը Հայաստանում տարբեր ժամանակներում, և ինչ տեխնիկաներ են օգտագործվել դրա համար:
- Ներկայացնել դպրոցում ընդունված կարգապահության կանոնները՝ դրանցից բխող էթիկական նորմերը և պատժամիջոցները՝ խախտելու դեպքում:
- Սովորեցնել, թե ինչպես կարելի է ներբեռնել էլեկտրոնային գրքեր, ինչ գործիքներ կան դրանք կարդալու համար, և ինչ կարգավորումներ կատարել՝ աչքերը չվնասելու համար:
- Համոզել աշակերտներին դառնալ աշակերտական կազմակերպության անդամ. ծանոթացնել կազմակերպության նպատակներին, միջոցառումներին, նեկայացնել անդամների պարտականություններն ու իրավունքները:

Հավաքի՛ր տեղեկություն

Երբ արդեն որոշել ես ներկայացման թեման՝ անհրաժեշտ է հավաքել ներկայացվող տեղեկությունը:

Տեղեկության համար ընտրիր հուսալի աղբյուրներ.

- Գրքեր և դասագրքեր. դասականները միշտ հուսալի են:
- Գիտական կայքեր (օր.՝ Վիքիպեդիա), գիտահանրամատչելի ռեսուրսներ (օր.՝ archive.org, researchgate.net), գիտական հոդվածներ:
- Պաշտոնական կայքեր (օր.՝ դպրոցի կայքը):
- Նորություններ և հետազոտություններ: Անպայման ստուգիր փաստերը, որպեսզի խուսափես սխալներից (*աղբյուրի հավաստիությունը ստուգելու կանոնները դասագրքի 4.2 բաժնում՝ կասկածելի հղումներ*):

Կազմի՛ր պլանը

Լավ պլանը գործի հաջողության գրավականն է: Ներկայացումը պետք է բաղկացած լինի 4 հիմնական մասերից:

✓ **Տիտղոսաթերթ**

Ընդգրկում է վերնագիրը, հեղինակի անունը և հեղինակային իրավունքը հաստատող նշանը:

✓ **Ներածություն**

Հենց առաջին իսկ պահից պետք է գրավել հանդիսատեսի ուշադրությունը: Այստեղ պետք է ցույց տալ ներկայացվող թեմայի կարևորությունը:

Օրինակ՝

«Ուզու՞մ ես, որ դպրոցի բակը լինի գեղեցիկ ու կանաչ»:

«Որքան շատ ծառ, այնքան շատ մաքուր օդ»

«Խնձորենու ճիշտ խնամքը կապահովի բարձր բերքատվություն»

✓ **Հիմնական մաս**

Հիմնական բովանդակությունը ցանկալի է, որ պարունակի առավելագույնը տասը սահիկ (slide): Ամեն սահիկ պետք է ներկայացնի մի միտք:

Ինչպե՞ս դա անել:

Քո հավաքած տեղեկությունից դուրս գրի հիմնական գաղափարները:

Ամեն գաղափարի շուրջ խոսելու համար առանձնացրու այնքան նյութ, որ տեղավորվես մեկ րոպեում:

Օրինակ՝

Սահիկ 1. Ինչու է ծառատունկը կարևոր դպրոցի համար
Սահիկ 2. Որքան հետաքրքիր է անցնելու այդ օրը
Սահիկ 3. Ինչ պետք է իմանալ նախապես. ծառ տնկելու կանոնները
Սահիկ 4. Ովքեր են օգնելու. ինչպես հետևել հրահանգիչներին
Սահիկ 5. Ինչպես գրանցվել ծառատունկին մասնակցելու համար
Սահիկ 6. Անցկացման օրն ու ժամը

✓ **Եզրափակում**

Այստեղ հակիրճ ամփոփիր թեման՝ կրկնելով հիմնական կետերը: Եվ վերջում ավելացրու գործողության կոչ:

Օրինակ՝

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առաջադրանք 2 «Իմ ներկայացման պլանը»

1. Թեման ընտրելուց և նպատակը որոշելուց հետո կազմիր ներկայացման պլանը:

- Որոշիր վերանգիրը:
- Ներկայացվող նյութը բաժանիր ամենաշատը 10 կետերի, որոնց մասին ուզում ես խոսել:
- Մտածիր ներածական մաս, որը ընդհանուր կներկայացնի թեման և կընդգծի թեմայի կարևորությունը:
- Մի քանի կետով ամփոփիր ողջ նյութը:

2. Թղթի վրա պատրաստիր ներկայացման սցենարը: Գրիր յուրաքանչյուր սահիկի բովանդակությունը:

Օրինակ՝

Որոշիր թեման

Հավաքիր տեղեկություն



Կազմի՛ր պլան

2 Սահիկաշար

Երբ արդեն որոշված և պլանավորված է ներկայացման բովանդակությունը՝ ժամանակն է մտածել ձևավորման մասին:

Կան բազմաթիվ էլեկտրոնային գործիքներ սահիկաշար պատրաստելու համար:

Օրինակ՝ PowerPoint, Keynote, Google slides, Tilda:

Քեզ մնում է միայն թղթի վրա պլանավորած սահիկները դարձնել էլեկտրոնային:

Սահիկի պատրաստում

Սահիկի տեսքից է կախված առաջին տպավորությունը: Լավ մտածված ձևավորումը միանգամից կլանում է հանդիսատեսի ուշադրությունը:

Որքան հակիրճ՝ այնքան գրավիչ

Պատկերացրու, որ նայում ես տեքստով լի սահիկի: Ձանձրալի է կարդալը: Բացի այդ տեքստը մանր է, ինչ էլ իր հերթին դժվարացնում է ընթերցումը:

- ✓ Պետք չէ ամբողջ տեքստը ներառել սահիկում: Թող միայն հիմնական կետերը: Մի սահիկի համար 8-12 բառը լավագույն տարբերակն է:
- ✓ Տեքստը լրացրու կամ փոխարինիր պատկերավոր նյութերով՝ նկարներ, լուսանկարներ, գծապատկերներ և այլն:

Օրինակ՝ գործընթացի երկար նկարագրության փոխարեն՝ հոսքագծի նկար:

Ծառ տնկելու ընթացքը

1. Փոս փորել
2. Արմատը դնել փոսի մեջ
3. Հող լցնել
4. Ջրել

- ✓ Եթե թեման ներառում է թվեր, ապա գծապատկերը դրանք ցուցադրելու լավագույն տարբերակն է:

Օրինակ՝

Աշակերտների հետաքրքրությունները

- 41% սպորտ
- 28% արվեստ
- 12% գիտություն
- 19% արշավներ



✓ Նշումներ արա

Սահիկի ներքևում կարող ես նշումներ կատարել: Դրանք սահիկաշարը ցուցադրելիս չեն երևա էկրանին: Կարող ես տպել նշումները և օգտվել դրանցից ելույթի ամանակ:

Ներդաշնակ գույներ՝ հաճելի ընթերցում

Դու կարող ես ստեղծել դատարկ էջ, ու ձևավորել այն ինչպես ուզում ես: Կարող ես նաև օգտվել առաջարկվող ձևանմուշներից:

✓ Օգտագործիր 2-3 հիմնական գույներ, որոնք լրացնում են միմյանց:
Օրինակ՝ կապույտ, սպիտակ, դեղին

✓ Տեքստը լավ ընթեռնելի է երբ ֆոնն ու տեքստը հակադիր գույներով են:
Օրինակ՝ սև տեքստ բաց ֆոնի վրա կամ սպիտակ տեքստ մուգ ֆոնի վրա

✓ Խուսափիր շատ պայծառ ու ճչացող գույներից. դրանք հոգնեցնում են աչքերը:

✓ Օգտագործիր մեկ կամ երկու տառատեսակ:
Օրինակ՝ մի տառատեսակը վերնագրերի, մյուսը՝ հիմնական տեքստի համար

✓ Մի ծանրաբեռնիր սահիկը դեկորատիվ տարրերով: Պարզությունը քո լավագույն ընկերն է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առաջադրանք 1 «Սահիկի ստեղծում»

1. «PowerPoint» միջավայրում ստեղծիր նոր ֆայլ ընտրիր դատարկ ձևանմուշը: Լրացրու տիտղոսաթերթը:

Այստեղ գրիր ներկայացման վերնագիրը



Այստեղ ավելացրու հեղինակի՝ քո անունը, ստեղծման ամսաթիվը, և այլն

2. Ավելացրու նոր սահիկներ: Ամեն սահիկում լրացրու վերնագիրն ու տեքստը:

Սեղմիր այստեղ նոր սահիկ ավելացնելու համար



3. Ձևավորիր սահիկը

Ներկիր այն որևէ գույնով: Ընտրիր ներկելու աստիճանական տարբերակը (ներքևում մուգ իսկ դեպի վերև աստիճանաբար բացվող):



Սեղմիր այստեղ սահիկը ներկելու համար

Ընտրիր գույնը և ներկելու ձևը

Փոխիր սահիկի վիա օբյեկտների դասավորությունը (ձախ կողմում վերնագիրն ու տեքստը, աջ կողմում նկարը):

Սեղմիր այստեղ և ընտրիր դասավորության տարբերակը



4. Տեղադրիր նկար

Սեղմիր այստեղ նկար տեղադրելու համար

Սեղմիր այստեղ էկրանի լուսապատճենը տեղադրելու համար



5. Ամեն սահիկի համար ավելացրու նշումներ



Այս հատվածը նախատեսված է նշումների համար

Առաջադրանք 2 «Նախասահմանված ձևաչափ»

1. Ստեղծիր նոր ֆայլ և ընտրիր առաջարկվող ձևանմուշներից մեկը:
2. Արդեն իսկ կազմված սահիկաշարի համար ընտրիր ձևավորման առաձարկվող ձևանմուշներից մեկը:

Սեղմիր այստեղ բոլոր ձևանմուշ-ները տեսնելու համար



Սեղմիր այստեղ գույներն ու տառատե-սակները ընտրելու համար

Սահիկի ցուցադրում, անիմացիա

Սահիկաշարն արդեն պատրաստ է և ժամանակն է այն ցուցադրել մեծ էկրանից:

Սեղմիր F5 կոճակը, և ցուցադրությունը կսկսվի հենց առաջին իսկ սահիկից: Եթե ուզում ես ցուցադրությունը սկսել այն սահիկից, որի վրա կանգ ես առել ապա սեղմիր Shift +F5:

Սեղմիր այստեղ և սկսիր ցուցադրությունը առաջին սահիկից

Սեղմիր այստեղ և շարունակիր ցուցադրությունը ընթացիկ սահիկից



Ցուցադրության ընթացքում սահիկները փոխելու համար սեղմիր մկնիկի ձախ կոճակը: Կարող ես օգտագործել ստեղնաշարի սլաքները սահիկները հետ ու առաջ անելու համար:

Անիմացիա

Սահիկի ցուցադրությունն ավելի տպավորիչ և հիշվող դարձնելու համար օգտագործիր անիմացիաներ: Դրանք դինամիկա են հաղորդում սահիկաշարին, և կարող են հետաքրքրություն առաջացնել: Բայց շատ կարևոր է անիմացիայի չափավոր օգտագործումը: Չափից շատ անիմացիան կարող է շեղել ուշադրությունը:

Փորձիր տարբեր անիմացիաներ, որպեսզի գտնես լավագույն տարբերակը քո ներկայացման համար:

Հիշի՛ր. անիմացիայի նպատակը ներկայացումը ավելի գրավիչ դարձնելն է՝ առանց չափազանցելու:

Ինչպե՞ս չչափազանցել անիմացիա օգտագործելիս

- ✓ Օգտագործիր անիմացիա, երբ պետք է գործընթացը քայլ առ քայլ ցույց տալ
  Օրինակ՝ հերթով սահիկի վրա ավելացնել ծառ տնկելու քայլերը
- ✓ Օգտագործիր անիմացիա, երբ պետք է շեշտել կարևոր կետը
  Օրինակ՝ ծառ տնկելու կարևորությունից խոսելիս հերթով ընդգծել ամեն կետը
- ✓ Օգտագործիր պարզ էֆեկտներ. տեքստի կամ պատկերի սահուն ցուցադրումը ավելի հաճելի է:

Եկ տեսնենք, թե ինչ անիմացաներ կան, և ինչպես կարող ես հետաքրքրություն ավելացնել քո սահիկաշարին:

Անիմացիաները կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի.

- **Մուտքի**
  Գործում է սահիկը ցուցադրելիս:
  Օրինակ՝ Սահիկի օբյեկտները հայտնվում են ոչ միանգամից, այլ աստիճանաբար:
- **Շեշտադրման**
  Սահիկի որևէ օբյեկտի վրա ուշադրությունը կենտրոնացնելու համար է:
  Օրինակ՝օՕբյեկտը կարող է թրթռալ կամ մեծանալ:
- **Ելքի**
  Գործում է այլ սահիկի անցնելիս:
  Օրինակ՝ սահիկը փակելուց առաջ օբյեկտները արող են աստիճանաբար անհետանալ:
- **Շարժման**
  Սահիկի վրա օբյեկտը տեղաշարժելու համար է:

Ինչպես անիմացիա ավելացնել



Ընտրիր անիմացիայի ենթական օբյեկտը և անիմացիաների ցանկից այն էֆեկտը, որն ուզում ես կիրառել:



Կիրառիր քո ներկայացմանը համապատասխան անիմացիաներ:

- ✓ Անիմացիայի ոճը պետք է համապատասխանի ներկայացման ընդհանուր ոճին:
- ✓ Անիմացին էֆեկտը պետք է խոսի քո թեմայի հետ (լուրջ, զվարճալի և այլն):
- ✓ Ուշադիր եղիր անիմացիայի տեմպին և տևողությանը: Այն չպետք է լինի շատ դանդաղ կամ շատ արագ:
- ✓ Դասավորիր անիմացվող օբյեկտները ճիշտ հերթականությամբ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առաջադրանք 1 «Երկրաչափական պատկերներ»

1. «PowerPoint» միջավայրում ստեղծիր նոր ֆայլ: Սահիկի վրա ավելացրու 4 երկրաչափական պատկերներ:



2. Ամեն օբյեկտի համար ընտրիր ցուցադրման որևէ էֆեկտ:





3. Կարգավորիր ցուցադրման տևողությունը այն օբյեկտների համար, որոնց համար անիմացիայի էֆեկտ ես կիրառել:



Ընտրիր ցուցադրման պահը
- Մկնիկի կոճակը սեղմելիս
- Նախորդ օբյեկտը ցուցադրելուց հետո
- Նախորդ օբյեկտի հետ միասին

Ընտրիր ցուցադրման տևողությունը

Նշիր, թե որքան է պետք սպասել ցուցադրումը սկսելուց առաջ

4. Ընդգծիր հնգանկյունը՝ մեծացնելով անիմացիայի տևողությունը:



Այս գիծը ցույց է տալիս ցուցադրման տևողությունը

5. Տեղափոխիր քառանկյունը կոր գծով: Ընտրիր շարժման տևողությունը:



Նշիր օբյեկտը և շարժման անիմացիաներից ընտրիր անհրաժեշտը